ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 102

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16 նոյեմբերի 2018 թվականի թիվ 12 նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 16 նոյեմբերի 2018 թվականի թիվ 12 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի ավագանու 14.09.2018թվականի թիվ 83 և թիվ 85 որոշումները անվավեր ճանաչելու մասին,

3. Արենի համայնքի Արենի բնակավայրում Մայիս Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 0.84211հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համաձայնություն տալու մասին,

4. Արենի համայնքի Ելփին բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համաձայնություն տալու մասին,

5. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու համաձայնություն տալու մասին,

6. Արենի համայնքի Չիվա և Արենի բնակավայրերում հրդեհներից տուժած և սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին,

7. Արենի համայնքի Ելփին և Չիվա բնակավայրերի տարածքից, բուսական ծածկույթից զուրկ, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հատվածներից հողային զանգվածի 1խմ-ի համար վճար սահմանելու մասին,

8. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող և Արփա գետի ափամերձ տարածքների վրա առկա չորացած ծառերը Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին որպես վառելափայտ տրամադրելու համաձայնություն տալու մասին,

9. Արենի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրված հողամասերի վրա առկա դեկորատիվ ծառերը հատելու թույլտվություն տալու և 1խմ-ի համար վճար սահմանելու մասին,

10. Արենի համայնքի 2018թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին,

11. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից մրցույթով վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին,

12. Արենիի համայնքապետարան-ՌԶԳ (Ռազմավարական զարգացման գործակալություն) համատեղ իրականացված ծրագրի վերաբերյալ Արենի ՀՈԱԿ-ի հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:

13. Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ղեկավարին կից Արենի համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 103

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.09.2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 83 ԵՎ ԹԻՎ 85 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Անվավեր ճանաչել Արենի համայնքի ավագանու 14.09.2018թվականի «Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում շինարարական աղբի համար տարածք հատկացնելու մասին» թիվ 83 և «Արենի համայնքի Արենի բնակավայրի Չիվայի ձոր հանդամասում էլեկտրական ենթակայան տեղադրելու համար 20 մ² հողատարածք հատկացնելու մասին» թիվ 85 որոշումները:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 104

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՄԱՅԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.84211 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի Մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կառավարության «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1595-Ն որոշմամբ հաստատված Արենի համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն.

- Մայիս Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 1.00811հա ընդհանուր մակերես ունեցող հողամասից (նպատակային նշանակությունը՝ ջրային,գյուղտնտեսկան, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ջրային, արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0179-0009, վկայական N 01112017-10-0013) 0.84211հա-ի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողեր, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 105

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որշումը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Արենի համայնքի ելփին բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.33054հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ արոտ, ծածկագիրը՝ 10-020-0116-) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողատարածքի վրա առկա է ինքնակամ շինություն, առաջարկել Արենի համայնքի ղեկավարին ՀՀ կառավարության կողմից հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու կամ մերժելու դեպքում 18.05.2006թվականի թիվ 912-Ն և 731-Ն որոշումներով սահմանված կարգերով ընդունել որոշում ինքնակամ կառույցը օրինականացնելու կամ քանդելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 106

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.45 հա (ծածկագիրը՝ 10-008-0112-0104 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով՝ 56 250 (հիսունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.006 հա (ծածկագիրը՝ 10-004-0017-նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով՝ 41040 (քառասունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 107

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ և ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի և Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 55-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Ավագ Ղազարյանի, Չիվա բնակավայրի բնակիչ Արմեն Խաչատրյանի դիմումները՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հրդեհից տուժած Արենի համայնքի ներքոհիշյալ բնակիչներին հատկացնել դրամական օգնություն

1) Ավագ Ղազարյան՝ 100հազար ՀՀ դրամ,

2) Արմեն Խաչատրյան՝ 250հազար ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Հասմիկ Օնիկի Վարդանյանի հուղարկավորությունը կազմակերպելու համար Աղվան Մանուկյանին հատկացնել դրամական օգնություն 200հազար ՀՀ դրամի չափով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱԾԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 108

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ և ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔԻՑ, ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ ԶՈՒՐԿ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՑ ՀՈՂԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ 1ԽՄ-Ի ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Ելփին և Չիվա բնակավայրերի տարածքից, բուսական ծածկույթից զուրկ, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հատվածներից հողային զանգվածի 1 խմ-ի համար սահմանել հետևյալ վճարները՝

1. Համայնքի բնակիչ հանդիսացող ֆիզիկական անձանց համար.

   1) Մինչև 20մ^3-ը հատկացնել անվճար,

   2) 20մ^3-ից ավել յուրաքանչյուր մետր խորանարդի համար՝ 700 ՀՀ դրամ

2. Համայնքի բնակիչ չհանդիսացող ֆիզիկական անձանց համար 1000 ՀՀ դրամ

3. Իրավաբանական անձանց համար 1500 ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 109

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԸ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն

1. ա) Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող և Արփա գետի ափամերձ տարածքների վրա առկա չորածած ծառերը անհատույց որպես վառելափայտ տրամադրել Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ Արենիի համայնքապետարանի սոցիալական օգնություններ տրամադրող մշտական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում՝ սահմանելով մեկ ընտանիքի համար առավելագույնը 3խմ,

բ) 3խմ-ից ավել վառելափայտի դեպքում յուրաքանչյուր խմ-ի համար սահմանել երեք հազար ՀՀ դրամ:

2. Համայնքի բնակիչ հանդիսացող ֆիզիկական անձանց համար 1 խմ չոր վառելափայտի դիմաց սահմանել վեց հազար ՀՀ դրամ՝ առավելագույնը 3 խմ ծավալով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 110

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ 1ԽՄ-Ի ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն՝

1. Քաղաքացու դիմումի առկայության դեպքում, Արենի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրված հողամասերի վրա առկա դեկորատիվ ծառերը, որոնք խանգարում են գյուղտնտեսական գործունեություն ծավալելուն, հատելու համար՝ հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

2. Հատված ծառերի 1խմ-ի համար սահմանել վճար.

1) Քաղաքացու կողմից աճեցված որպես շինափայտ հաատված ծառերի համար երեք հազար ՀՀ դրամ,

2) Մինչև հողամասի վարձակալությամբ տրամադրվելը տնկված ծառերի համար որպես շինափայտ՝ տասը հազար ՀՀ դրամ,

3) Որպես վառելափայտ՝ վեց հազար ՀՀ դրամ:

3. Ծառահատման դեպքում վարձակալը պարտավոր է յուրաքանչյուր միավորի դիմաց կրկնակի ծառատնկման աշխատանքներ կատարել համայնքապետարանի կողմից սահմանված վայրում՝ համայնքապետարանի հետ կնքելով համապատասխան պայմանագիր:

Կողմ -8 Դեմ -2 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 111-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է***՝

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի 2018թվականի տարեկան բյուջեի վարչական մասի՝ կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 1500 հազար ՀՀ դրամ, 4239(ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 1500հազար ՀՀ դրամ, ընդամենը՝ 2600հազար ՀՀ դրամ և ուղղել.

ա) նույն ոլորտի 4251(շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին 120հազար ՀՀ դրամ, 4214(կապի ծառայություններ) հոդվածին 410հազար ՀՀ դրամ, 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածին 500հազար ՀՀ դրամ, 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին 70հազար ՀՀ դրամ, 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին 1250հազար ՀՀ դրամ, 4822 (այլ հարկեր) հոդվածին՝ 400հազար ՀՀ դրամ,

բ) Գյուղատնտեսություն գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 01 դասի 4241(մասնագիտական ծառայություններ) հոդվածին 120հազար ՀՀ դրամ,

գ) Արտադպրոցական դաստիրակություն գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի 4241(մասնագիտական ծառայություններ) հոդվածին 130հազար ՀՀ դրամ:

2. Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից պակասեցնել 2000հազար ՀՀ դրամ և ուղղել ջրամատակարարում գործառնական դասակարգման դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին:

3. Արենի համայնքի 2018թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մասի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածից

պակասեցնել 600հազար ՀՀ դրամ և ուղղել 5134(նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 112

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

1) 0.17076 հա (ծածկագիրը՝ 10-008-0110-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

1) 0.08057 հա (ծածկագիրը՝ 10-020-0531-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2) 0.18243 հա (ծածկագիրը՝ 10-020-0091-, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հող) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

3) 0.18213 հա (ծածկագիրը՝ 10-020-0116-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ հնդավոր պտղատու այգի) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 5000 (չորս հազար) ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

1) 0.47309 հա (ծածկագիրը՝ 10-036-0110-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ:

2) 0.8 հա (ծածկագիրը՝ 10-036-0104-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 113

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ - ՌԶԳ (ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) ՀԱՄԱՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԵՆԻ ՀՈԱԿ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենիի համայնքապետարան-ՌԶԳ (Ռազմավարական զարգացման գործակալություն) համատեղ իրականացված ծրագրերի վերաբերյալ Արենի ՀՈԱԿ-ի հաշվետվությունն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
Արենի համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 16-ի
թիվ 113 որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ-ՌԶԳ (ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) ՀԱՄԱՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՌԶԳ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)	ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)	
			ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ	ՓԱՍՏԱՅԻ
ԱՂԱՎՆԱՁՈՐ	5,6 կմ դաշտային ճանապարհի բարեկարգում «Քարատակ» հանդամասում	2,384,000	1,676,600	2,734,580
	Հովվի կացարանի կառուցում «Քարատակ» հանդամասում	1,352,420	1,043,143	813,950
	Ջրելատեղի կառուցում «Քարատակ» հանդամասում	1,205,150	1,036,643	896,070
ԱՐԵՆԻ	Ջրելատեղի կառուցում «Կապի գլուխ» հանդամասում	839,000	645,396	356,780
	Ջրելատեղի կառուցում «Ամաղու» հանդամասում	1,264,750	1,069,343	712,100
	Ջրելատեղի կառուցում «Չամ» հանդամասում	733,350	642,693	394,900
ԳՆԻՇԻԿ	Ջրելատեղի կառուցում «Դելմար» հանդամասում	2,855,750	2,315,623	1,617,620
ԱՐՓԻ	4.3 կմ հանդամիջյան ճանապարհի բարեկարգում «Նախատեղի» հանդամասում	2,274,000	2,886,950	1,944,500
ԸՆԴԱՄԵՆԸ		12,908,420	11,316,391	9,470,500

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 114-Ն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 56-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 34-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 30-ը նոյեմբերի 2014թվականի թիվ 27-Ն որոշումն ուժըկորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ղեկավարին կից Արենի համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 56-Ն որոշումը:
2. Հաստատել Արենի համայնքի ղեկավարին կից, Արենի համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
Արենի համայնքի վագանու 2018 թվականի
նոյեմբերի 16-ի թիվ 113-Ն որոշման

ԿԱՐԳ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Արենի համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Արենի համայնքի ղեկավարին կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ խորհուրդ):
2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:
3. Խորհրդի խնդիրներն են.
   1) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը Արենի համայնքի ղեկավարին,
   2) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը Արենի համայնքի ղեկավարին:
   3) տվյալ ոլորտի կառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը:
4. Արենի համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են հետևյալ խորհուրդները.
   1) համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի և տարեկան բյուջեի կառավարման,
   2) քաղաքաշինական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտի,
   3) երիտասարդության հարցերի, մշակույթի, հանրակրթության, առողջապահության, սոցիալական հարցերի և սպորտի,
   4) հանրային կապերի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և աջակցման,
5. Խորհուրդը ձևավորվում է մինչև 40 անդամի կազմով:
6. Խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է Արենի համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ), ընդ որում՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կազմում ներգրավում են նաև.
   1) Արենի համայնքի ավագանու 3 անդամ՝ վերջիններիս համաձայնությամբ, որոնց Արենի համայնքի ղեկավարը նշանակում է նշված խորհրդի կազմում ընդգրկելու մասին Արենի համայնքի ավագանու անդամի հայտի հիման վրա,
   2) մինչև երեք փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքներ և բարձր որակավորում ունեցող, ցանկալի է այնպիսի անձիք, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:
7. Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց նշանակումը խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սույն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը, ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կազմում

համայնքի բնակիչները ներգրավվում են յուրաքանչյուր վարչական շրջանից մեկ բնակիչ (հնարավորության դեպքում):

8. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ խորհրդի առնվազն 25 անդամ:
9. Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից:
10. Խորհուրդը նախագահում է Արենի համայնքի ղեկավարը, ով նշանակում է խորհրդի նախագահի տեղակալին և քարտուղարին: Խորհրդի նախագահի տեղակալ կարող է լինել Արենի համայնքի ղեկավարի տեղակալը կամ Արենի համայնքի ղեկավարի օգնականի, կամ Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, իսկ քարտուղար՝ Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ աշխատակիցը:
11. Խորհուրդն իր նիստերը կազմակերպում է Արենի համայնք, Արենի բնակավայր, 15 փողոց, շենք 3 հասցեում գտնվող Արենիի համայնքապետարանի վարչական շենքում, եթե Արենի համայնքի ղեկավարի կողմից այլ որոշում չի ընդունվել:
12. Խորհրդի նախագահի որոշմամբ խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Վայոց ձորի մարզպետարանից հրավիրված ոլորտային պատասխանատուներ, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
13. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է Արենի համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:
14. Խորհրդի նախագահն իրականացնում է խորհրդի գործունեության ընդհանուր ղեկավարումը:
15. Խորհրդի նախագահը՝
    1) հաստատում է խորհրդի նիստի օրակարգը,
    2) հրավիրում է խորհրդի նիստերը,
    3) կազմակերպում է խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը, 4)
    4) ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունը:
16. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է խորհրդի նախագահին նրա բացակայության ժամանակ:
17. Խորհրդի քարտուղարը՝
    1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում խորհրդի նախագահի հաստատմանը,
    2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը, ապահովում է մասնակիցների ներկայությունը,
    3) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,
    4) վարում է խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:
18. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում, մասնավորապես եթե .
    1) 2 անգամից ավելի թույլ չի տալիս խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ և (կամ) խոչընդոտում է խորհրդի անդամի ելույթը,
    2) առանց ձայնի իրավունք ստանալու 2 անգամից ավելի արտահայտում է իր կարծիքը,
    3) որևէ այլ կերպ խոչընդոտում է խորհրդի նիստի բնականոն ընթացքը:
19. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
20. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:
21. Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:
22. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են խորհրդի նիստերին:
23. Խորհուրդը, ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:
24. Խորհրդի քարտուղարը մշակում և կազմում է նիստի օրակարգը՝ համաձայնեցնելով խորհրդի նախագահի հետ:
25. Խորհրդի նիստի օրակարգը խորհրդի քարտուղարը ներկայացնում է խորհրդի անդամներին՝ նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:
26. Օրակարգում կարող են մտցվել լրացուցիչ հարցեր՝ Արենի համայնքի ղեկավարի կողմից:

27. Խորհրդի անդամն իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ տվյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
28. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Արենիի համայնքապետարանի պաշտոնական համացանցային և սոցիալական կայքէջերում: Խորհրդի ընդունած եզրակացություններն ու առաջարկությունները հրապարակվում են ամբողջությամբ:
29. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից:
30. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝
    1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
    2) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:
31. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան խորհրդի կազմից հանելու մասին Արենի համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե խորհրդի անդամը՝
    1) դիմում է ներկայացրել խորհրդից դուրս գալու վերաբերյալ,
    2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
    3) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել խորհրդի նիստերի աշխատանքին,
    4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը խորհրդում,
    5) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,
    6) նա մահացել է,
    7) անձը դադարել է ավագանու անդամ լինելուց:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ